

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՍԱՐ

ՀՀ կառավարությունը 2007թ. սեպտեմբերի 20-ին որոշում է կայացրել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին հայտնելու կարգը սահմանելու մասին»: Որոշումը ուժի մեջ է մտել 2007թ. հոկտեմբերի 20-ից:

Համաձայն վերընշված որոշման ՀՀ քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում՝ ընդունելու կամ ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում դրա մասին անձամբ (ներկայացնելով ստորև նշված 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը) կամ փոստով (ուղարկելով ստորև նշված 1-ին և 4-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը) հայտնում է ՀՀ օտարերկրյա պետություն գործող դիվանագիտական ծառայության մարմիններին: 1995թ. հունվարի 1-ից հետո մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած և այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած անձինք սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում դրա մասին անձամբ կամ փոստով հայտնում են Հայաստանի Հանրապետության օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններին: Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին հայտնելիս՝ հայտարարություն տվողը պետք է ներկայացնի՝

1. Դիմում (դիմումում նշվում են այն մարմնի անվանումը, ում ներկայացվում է դիմումը, հայտարարություն տվողի անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը, այն պետության անվանումը, որի քաղաքացիությունն ստացել կամ ընդունել է, քաղաքացիությունն ստանալու կամ ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը: Դիմումը ստորագրում է հայտարարություն տվողը՝ նշելով դիմումը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը): Դիմումը պետք է գրված լինի հայերեն:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու և այլ պետության քաղաքացու անձնագրերի նոտարական կարգով վավերացրած պատճենները:

**Հայտնում ենք նաև, որ ՀՀ քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին ՀՀ կառավարության լիազոր մարմնին չհայտնելն առաջ է բերում վարչական, իսկ առանձին դեպքերում՝ քրեական պատասխանատվություն:**